Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի գործունեության մոնիթորինգ

ԶԵԿՈՒՅՑ

Մարտունի 2023

Ուսումնասիրությունն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակում: Ծրագրի նպատակն է նպաստել համայնքներում երիտասարդների քաղաքացիական մասնակցությանը՝ հզորացնելով նրանց հետազոտական և վերահսկողական կարողությունները: Ծրագիրն իրականացվում է «Թրանսֆարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի և իր գործընկերների՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «ՄԻՏՔ» ՀԿ-ների կողմից:

Սույն զեկույցը հրապարակվել է ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն, և այն չի արտացոլում ԱՄՆ դեսպանատան տեսակետները:

Բովանդակություն

Ամփոփագիր 4
Հապավումներ 6
Նախաբան 7
Մոնիթորինգի մեթոդաբանությունը 8
Իրականացված աշխատանքների նկարագրություն 8
Ավագանու նիստի կազմակերպման վերլուծություն 8
Ստացված արդյունքների ամփոփում 13
Իրականացված հարցազրույցների վերլուծություն 17
2022 թ.-ի Մարտունի համայնքի ավագանու որոշումների վերլուծություն 19
Ավագանու նիստերի տեսաձայնագրությունների վերլուծություն 21
Եզրակացություններ 22
Առաջարկություններ բացահայտված խնդիրների կարգավորման վերաբերյալ 23
Սկզբնաղբյուրներ 24
Հավելված 1 25

Ամփոփագիր

2023 թվականի հունվար-մարտ ամիսներին «Թրանսփերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի կողմից «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ իրականացվել է Մարտունու ավագանու 2022 թվականի գործունեության մոնիթորինգ: Մոնիթորինգը խթան է հանդիսանալու համայնքի ավագանու անդամների և քաղաքացիների ակտիվ մասնակցությունը համայնքի տեղական ինքնակառավարմանը, ավագանու նիստերին, հանրային լսումներին:
Ուսումնասիրության համար իրականացվել են որակական և քանակական հարցազրույցներ ավագանու անդամներ հետ, այցելություններ նիստերի անցկացման վայր, տարբեր ժամանակահատվածներում լուսանկարվել է համայնքապետարանի ցուցատախտակը: Ուսումնասիրվել է ավագանու 2022 թվականի կայացրած որոշումների բովանդակությունը, համեմատական է տարվել ավագանիների գործունեության և գործող օրենսդրության միջև:
Կատարված ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ՝

- 2022 թվականի ընթացքում տեղի է ունեցել ավագանու 15 նիստ, որից 9-ը՝ հերթական, 6-ը՝ արտահերթ, 1-ը՝ չկայացած:
- Ավագանու նիստերի օրակարգերը, արձանագրությունները համայնքապետարանի ցուցատախտակին և բնակիչներին տեսանելի վայրում չեն փակցվել:
- Համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով ավագանու նիստերի վերաբերյալ իրազեկում հրապարակվել է միայն 6 անգամ:
- Մշտական գործող հանձնաժողովներում հանձնաժողովի անդամները հիմնականում իշխող կուսակցությունից են:
- 2022 թվականի ընթացքում համայնքի ավագանին չի ունեցել նիստերի դահլիճ, այն շահագործման է հանձնվել 2023 թվականի սկզբներին, մինչև 2023 թվականի փետրվար ամիսը ավագանու անդամների համար նախատեսված առանձնացված աշխատասենյակներ չեն եղել:
- 01. 01. 2022 թ.-ից մինչև 01. 01. 2023 թ.-ը ավագանին քննարկել է 252 որոշման նախագիծ, ընդունել է 228 որոշում. որոշումների գերակշիռ մասը վերաբերվում է անշարժ գույքի, հողատարածքների վարձակալությանը, աճուրդ-վաճառքին, օտարմանը, անհատույց տրամադրմանը(74 որոշում; ընդհանուրի 36%-ը), բյուջեի քննարկմանը, հաստատմանը, փոփոխմանը և /կամ/ լրացմանը, սուբվենցիոն ծրագրերի քննարկմանը և հաստատմանը (34 որոշում; 17%), համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակազմերի կառուցվածքներին, աշխատողների թվաքանակին, հաստիքացուցակներին և պաշտոնական դրույքաչափերին (18 որոշում; 9%):
- Համայնքի ավագանին մինչև 2023 թվականի փետրվար ամիսը հանդես չի եկել ոչ մի ուղերձով:
- 2022թ. հրավիրվել է ավագանու 15 նիստ (որից մեկը՝ չկայացած), որոնց ընթացքում առավել շատ բացակայություններ ունեցած անդամների թիվը ութն է՝ Խաչատրյան Արարատ (8 բացակա), Հովհաննիսյան Կարինե (8 բացակա), Հունանյան Նորիկ (7 բացակա), Սահակյան Սեդրակ (11 բացակա), Վարդանյան Լուսինե (7 բացակա), Ալեքսանյան Հայկ (10 բացակա), Հովհաննիսյան Լիանա (8 բացակա), Մովսիսյան Անդրանիկ (7 բացակա): Ըստ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանի՝ ավագանու անդամների բացակայությունները հարգելի են, այդ իսկ պատճառով նրանց հեռացման հարցը չի դրվել նիստի օրակարգ:
- Ավագանու նիստերը կայանում են հրապարակային, համայնքի բնակիչները ավագանու նիստերին կարող են մասնակցել առանց նախապայմանների և խոչընդոտների, նրանց համար կան հատկացված նստատեղեր, որոնք սակայն շատ քիչ են: Սակայն բնակիչները առանձնապես շահագրգռված չեն մասնակցելու նիստերին: Եթե կան քաղաքացիներ, որոնք ներկա են գտնվում

նիստերին, ուրեմն օրակարգում կան իրենց վերաբերվող հարցեր: Նշենք նաև, որ ավագանու նիստերի արձանագրություններում բնակիչների մասնակցության վերաբերյալ ոչ մի նշում չկա: Վերհանված խնդիրները լուծելու համար առաջարկվում է՝

- տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը ակտիվացնելու նպատակով ավելի հաճախ կազմակերպել իրազեկման հանդիպումներ,
- կայանալիք հանրային լսումների ու ավագանու նիստերի մասին հայտարարությունները փակցնել համայնքապետարանի ցուցատախտակին, ինչպես նաև համայնքի մարդաշատ այլ վայրերում, օգտագործել Մարտունի համայնքի ֆեյսբուքյան էջը և տեղեկացնել ավագանու նիստերի և հանրային քննարկումների մասին,
- կիրառել խրախուսական մեթոդներ ավագանու նիստերին բնակիչների մասնակցությունը ապահովելու համար,
- ուսումնասիրելով ավագանու որոշումների բովանդակությունը՝ առաջարկվել է ավագանու նիստերի օրակարգերում ներառել համայնքի կրթության, մշակույթի ու երիտասարդության զարգացմանն ուղղված հարցեր, քննարկել համայնքի ռազմավարական պլանավորմանն ու զարգացմանն ուղղված թեմաներ,
- համայնքային պաշտոնական կայքէջը բնակիչներին հասանելի դարձնելու նպատակով, բնակիչների համար կազմակերպել դասընթացներ և իրազեկման հանդիպումներ,
- համայնքի ավագանու անդամների ակտիվությունը խթանելու նպատակով, առավել ակտիվ ավագանու անդամների գործունեության մասին իրականացնել հրապարակումներ համայնքային կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Հապավումներ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակական կազմակերպություն

Նախաբան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու գործունեության թափանցիկության մոնիթորինգն իրականացվել է 2023 թվականին «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակներում: Մոնիթորինգն իրականացնելու խթան է հանդիսացել համայնքի ավագանու անդամների և բնակիչների ոչ այնքան ակտիվ մասնակցությունը համայնքի կառավարմանը: Ուսումնասիրվել է համայնքի ավագանու և բնակչության ակտիվությունը: Մոնիթորինգի նպատակն է ստանալ համայնքի ավագանու անդամների գործունեության ամփոփ պատկերը համայնքային պաշտոնական համացանցային կայքի, ավագանու անդամների հետ հարցազրույցների և ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրության միջոցով: Մոնիթորինգը հնարավորություն է տվել գնահատել ավագանու անդամների գործունեության ակտիվությունը, նրանց կողմից քննարկվող հարցերի շրջանակը: Զեկույցը ներառում է նաև որոշ առաջարկություններ, որոնք դուրս են բերվել ուսումնասիրության արդյունքում:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը

Մոնիթորինգի նպատակին հասնելու համար օգտագործվել են հետևյալ մեթոդական գործիքները՝

- Համայնքի ավագանու անդամներին ուղղված հարցումներ
- Համայնքի ավագանու անդամներից ստացված պատասխանների ուսումնասիրություն
- Համապատասխան օրենսդրության ուսումնասիրություն
- Դիտարկումներ համայնքապետարանում. այցելություններ, ավագանու նիստերի անցկացման վայրի և իրազեկման ցուցանակների դիտում, լուսանկարում:

Ստացված տեղեկությունների վերլուծության և դրա արդյունքում վեր հանված խնդիրների հիման վրա առաջարկվել են համապատասխան լուծումներ:

Ուսումնասիրման առարկան են եղել՝

- Համայնքի ավագանու նիստերի անցկացման մասին իրազեկումը
- Տեղեկությունների տարածման գործիքները
- Ավագանու նիստերի մատչելիությունը կամ հասանելիությունը քաղաքացիների համար
- Ավագանու կայացրած որոշումների բովանդակությունը

Իրականացված աշխատանքների նկարագրություն

2022 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ն մշակել է սույն հետազոտության մոնիթորինգի մեթոդաբանությունը: 2023թ. հունվար-փետրվար ամիսների ընթացքում ուսումնասիրվել է Մարտունի համայնքի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան էջում առկա տեղեկատվությունը ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ, իրականացվել է հարցազրույցներ ավագանու 20 անդամների հետ (Հարցաթերթի օրինակը՝ հավելված-1-ում): Այս զեկույցը կազմվել է հարցազրույցներից ստացված պատասխանների և վերոնշյալ հարթակների ուսումնասիրության արդյունքում:

Ավագանու նիստի կազմակերպման վերլուծություն

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է՝

Հոդված 15. Տեղեկացումը համայնքի ավագանու նիստերի մասին

1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում:
2. 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում այդ տեղեկությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային ցանցի, այդ թվում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով:
3. Ավագանու անդամներին տրամադրված, նիստի հետ կապված փաստաթղթերը, եթե դրանք քննարկվելու են հրապարակային նիստում, պետք է դրված լինեն համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար մատչելի տեղում, իսկ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում՝ նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում՝ ներբեռնման հնարավորությամբ: Ավագանու նիստի հետ կապված փաստաթղթերն ավագանու անդամներին տրամադրվում են նաև էլեկտրոնային եղանակով:

4. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի պահանջելու և օրենքով սահմանված կարգով ստանալու սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկատվությունը:
Փաստացի՝
Համայնքապետարանի ցուցատախտակին և բնակիչներին տեսանելի վայրում նիստի օրակարգը և արձանագրությունը նախօրոք չեն փակցվում (պատկեր 1-ում փետրվարի 14-ին արված լուսանկարն է, իսկ պատկեր 2-ում՝ ավագանու նիստը տեղի է ունեցել փետրվարի 24-ին): Նիստի վերաբերյալ իրազեկում լինում է միայն համայնքապետարանի կայքի միջոցով («Իրադարձություններ» բաժնում (պատկեր 3): 2022 թվականի ընթացքում ավագանու միայն 6 նիստի մասին է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով հրապարակվել հայտարարություն նիստի կայացման տեղի և ժամի վերաբերյալ (պատկեր 4):

Պատկեր 1. Համայնքապետարանի ցուցատախտակը լուսանկարված 2023 թվականի փետրվարի 14-ին



Պատկեր 2. Համայնքապետարանի ցուցատախտակը լուսանկարված 2023 թվականի փետրվարի 24-ին

Պատկեր 3. Մարտունու համայնքապետարանի պաշտոնական կայքում ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը



Պատկեր 4. Մարտունու ֆեյսբուքյան էջում ավագանու նիստերի վերաբերյալ տեղեկատվությունը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝
Համայնքի ավագանին ընդունում է կանոնակարգ, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր:
Համայնքի ավագանին գործում է ըստ 27.12.2021թ. ընդունված կանոնակարգի
01.01.2022թ-ից մինչև 01.01.2023թ տեղի է ունեցել 15 ավագանու նիստ, որից՝

արտահերթ	Հերթական
6	9

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝
Ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքում ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար ստեղծում է մշտական գործող, իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

Փաստաթղթի՝
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով
Ստեղծել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու մշտական գործող 4 հանձնաժողով՝
ա) Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.
բ) Մշակույթի, կրթության, սպորտի, սոցիալական , առողջապահության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.
գ) Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողով.
դ) Խնամակալության և հոգաբարձության մշտական հանձնաժողով:
Մշտական գործող հանձնաժողովների նախագահներն են «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության անդամներ `
Մարինա Հովեյան
Անդրանիկ Հարությունյան
Տարոն Արշակյան
Վահագն Դավթյան
Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝
Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ սույն օրենքով, ինչպես նաև ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով գործունեության իրականացման համար:
Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ: Սույն օրենքով սահմանված դեպքերում ավագանին կազմում է արձանագրություններ
Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ պետական այլ մարմիններին:
Փաստաթղթի՝
Մինչև 01.01.2023 թ
Համայնքի ավագանին չի ունեցել նիստերի հատուկ դահլիճ, ավագանու անդամների առանձնացված աշխատասենյակներ.
Ավագանու նիստերը անցկացվել են համայնքի ղեկավարի աշխատասենյակում:
Համայնքի ավագանին 01.01.2022թ-ից մինչև 01.01.2023թ-ը՝

Ընդունել է որոշումներ	Քննարկել է որոշման նախագծեր	Ընդունել է ուղերձներ
228	**252**	0

Համայնքի ավագանին մինչ օրս հանդես չի եկել ոչ մի ուղերձով:

Ստացված արդյունքների ամփոփում

Այս բաժնում ներկայացված են Մարտունի համայնքում 2022 թվականին կայացած ավագանու նիստերի, նիստերին համայնքի ավագանու անդամների մասնակցության և քվեարկության ընդհանուր պատկերները, որոնք պատրաստվել են համայնքի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության հիման վրա:

Պատկեր 5. Մարտունի համայնքի ավագանու 2022 թ. ավագանու կայացած նիստեր

Պատկեր 6 և 7. Մարտունի համայնքի ավագանու 2022 թ. կայացած նիստերին ավագանու անդամների մասնակցությունը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի՝ ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:
2022թ. հրավիրվել է ավագանու 15 նիստ, որից 1-ը չի կայացել: Նիստերի ընթացքում առավել շատ բացակայություններ ունեցած անդամների թիվը ութն է՝ Խաչատրյան Արարատ (8 բացակա), Հովհաննիսյան Կարինե (8 բացակա), Հունանյան Նորիկ (7 բացակա), Սահակյան Սեդրակ (11 բացակա), Վարդանյան Լուսինե (7 բացակա), Ալեքսանյան Հայկ (10 բացակա), Հովհաննիսյան Լիանա (8 բացակա), Մովսիսյան Անդրանիկ (7 բացակա): Ըստ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանի՝ ավագանու անդամների բացակայությունները հարգելի են եղել, այդ իսկ պատճառով նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը չի դրվել ավագանու նիստի օրակարգ:
Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ ավագանու անդամների բացակայությունները ավագանու նիստերի ավելի քան կեսից, նվազեցնում են ավագանու անդամների աշխատանքի արդյունավետությունը: Բացակայելու արդյունքում նրանք անտեղյակ են մնում ավագանու նիստերին քննարկվող համայնքային կարևորագույն հարցերին, չեն մասնակցում քվեարկությանը, չեն փորձում լուծում տալ համայնքային խնդիրներին, ինչից կարելի է եզրակացնել, որ նրանք չեն կատարում իրենց լիազորություններով նախատեսված պարտականությունները:

Պատկեր 8 և 9. Մարտունի համայնքի ավագանու 2022 թ. կայացած նիստերին ավագանու անդամների քվեարկությունը

Մարտունի համայնքի ավագանու 2022 թ.-ին կայացած նիստերին ավագանու անդամների քվեարկությունը

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Անդրանիկ Մովսիսյան	99	0	0
Գոհար Մանուկյան	214	0	0
Սյուզաննա Մարկարյան	124	7	26
Սեդրակ Սահակյան	10	5	3
Արմեն Սեդրակյան	120	0	1
Լուսինե Վարդանյան	86	0	1
Կորյուն Խաչատրյան	186	0	0

Ավագանու անդամներ

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հակոբ Վարդանյան	127	5	25
Անդրանիկ Գրիգորյան	153	1	0
Մեխակ Հակոբյան	124	4	24
Նաղաշ Հակոբյան	158	4	10
Հայկ Ալեքսանյան	99	0	0
Լիաննա Հովհաննիսյան	126	1	1
Մարինա Հովեյան	146	0	1

2023 թ.

Աղբյուրը՝ www.martuni.am

Իրականացված հարցազրույցների վերլուծություն

Ստորև ներկայացված են համայնքի ավագանու անդամների հետ իրականացրած հարցազրույցից ստացված պատասխանները:
Համայնքապետարանը ավագանու առաջիկա նիստի օրվա մասին համայնքի բնակչությանը տեղեկացնում է համայնքապետարանի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով: Նիստից 7 օր առաջ ավագանու անդամներին տեղեկացվում է նիստի ու օրակարգի մասին, որը բավարարում է նախապատրաստվել օրակարգի հարցերի քննարկմանը: Սովորաբար ամեն նիստի վերջում ավագանու անդամները հաստատում են հաջորդ նիստի անցկացման օրը: Համայնքում կազմակերպվում են հանրային լսումներ, որոնք հիմնականում վերաբերվում են սուբվենցիոն ծրագրերին և համայնքի բյուջեի քննարկումներին: Ավագանու անդամների կարծիքով հանրային լսումների իրազեկման արդյունավետ տարբերակը տեղական հեռուստատեսության և հայտարարությունների միջոցով իրազեկումն է, կայքում տեղադրելը, հայտարարությունների տեսքով իրազեկումները: Քանի որ 2022 թվականի ընթացքում համայնքապետարանը չի ունեցել նիստերի դահլիճ, ավագանու նիստերը անցկացվել են համայնքապետի աշխատասենյակում: Ավագանու նիստերին բնակիչները կարող են մասնակցել առանց նախապայմանների և խոչընդոտների: Նրանց համար կան հատկացված նստատեղեր, որոնք սակայն շատ քիչ են, քանի որ նստատեղերը բավարարում են միայն աշխատակազմին ու բնակավայրերի վարչական ղեկավարներին (2023 թվականի սկզբներին շահագործման է հանձնվել նոր նիստերի դահլիճը): Քաղաքացիների մուտքը ավագանու նիստերին միշտ բաց է, սակայն մարդիկ այդքան էլ շահագրգռված չեն մասնակցություն ցույց տալու առումով:
2022 թվականի ընթացքում ավագանու նիստերին մասնակցել է մոտավորապես 10-15 քաղաքացի, ովքեր ներկա են եղել, եթե իրենց վերաբերվող հարց է եղել նիստի օրակարգում: 2022 թվականից մինչև 2023 թվականի փետրվարը համայնքի ավագանին չի ունեցել նստավայր, քանի որ այն գտնվել է վերանորոգման փուլում, այդ իսկ պատճառով է նաև, որ ավագանու անդամները համայնքապետարանի տարածքում չունեն աշխատասենյակ, անհրաժեշտության դեպքում օգտագործում են համայնքի ղեկավարի աշխատասենյակը: Ավագանու անդամների կողմից ներկայացված որոշ առաջարկություններ առանց հիմնավորման մերժվել են: 2022 թվականի ընթացքում բնակիչների կողմից հարցում, բողոք, դիմում ավագանու անդամները ստացել են հիմնականում բանավոր: Ավագանու անդամները համայնքապետից ոչ մի անգամ սենյակ չեն խնդրել՝ ընդունելու կամ քաղաքացիների հետ հանդիպումներ կազմակերպելու համար, բացառությամբ «Ալաշկերտ» կուսակցությունների դաշինքի:
Քանի որ Մարտունին խոշորացված համայնք էր դարձել, արտահերթ նիստերը շատ են եղել՝ ամենատարբեր հարցերով՝ բյուջեի հետ կապված, կիսատ մնացած հարցերը նորից վերանայելու հետ կապված:
Ավագանու անդամները նշել են, որ ավագանու որոշումները հիմնականում ընդունվում են ՔՊ կուսակցությունը ներկայացնող ավագանու անդամների բացարձակ մեծամասնությամբ. ներկաների ձայների մեծամասնությամբ / 14+ /:
Հիմնականում իշխող խմբակցության ավագանու անդամներն են ընդգրկված ժամանակավոր և մշտական հանձնաժողովների կազմերում: Ընդդիմադիր կուսակցության անդամներից ոչ մի ավագանու անդամ ընդգրկված չէ մշտական հանձնաժողովների կազմերում:
Ավագանու որոշ անդամներ պատասխանել են, որ ուսումնասիրություններ օրակարգի հարցերի վերաբերյալ չեն իրականացվում, իսկ որոշ մասը պատասխանել է՝ «այո, իրականացվում են» : Ավագանին և համայնքապետարանը քաղաքացիների առջև իր գործունեության հաշվետվողականությունը ապահովում է ոչ լիարժեք: Ավագանին և համայնքապետարանը ներկայացված դիտարկումների և առաջարկությունների, դրանց հետագա ընթացքի և

արդյունքների վերաբերյալ վիճակագրություն ոչ միշտ է վարում: Եթե, ինչպես հարկն է, լինում է, դա աշխատանքը միայն հեշտացնում է:

2022 թ.-ի Մարտունի համայնքի ավագանու որոշումների վերլուծություն

Այս բաժնում ներկայացված են Մարտունի համայնքի ավագանու 2022 թվականի որոշումների բովանդակության ուսումնասիրության արդյունքներն՝ ըստ տոկոսների (պատկեր 8): Ընդհանուր կայացվել է 228 որոշում, որից՝ 25-ը եղել է ավագանու հաջորդ նիստի օրվա հաստատման մասին: Ավագանու որոշումները եղել են հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակազմերի կառուցվածքներ, աշխատողների քանակներ, հաստիքացուցակներ և պաշտոնական դրույքաչափեր (18 որոշում՝ 9%),
- համայնքի բյուջեի քննարկում, հաստատում, փոփոխում և (կամ) լրացում, սուբվենցիոն ծրագրերի քննարկում և հաստատում (34 որոշում՝ 17%),
- հողային հաշվեկշիռը հաստատելու մասին, գլխավոր հատակագծում փոփոխություն, նպատակային նշանակության մեջ փոփոխություն (13 որոշում ՝ 6%),
- ավագանու որոշման մեջ փոփոխությունների կատարում (8 որոշում՝ 4%),
- բնակիչներին դրամական օգնության տրամադրում (10 որոշում՝ 5%),
- անշարժ գույքի, հողատարածքների վարձակալություն, աճուրդ-վաճառք, օտարում, անհատույց տրամադրում (74 որոշում՝ 36%),
- համայնքի ղեկավարին կից գործող խորհրդակցական մարմիններ և մրցութային հանձնաժողովներ ստեղծելու մասին (4 որոշում՝ 2%),
- արտոնություններ (տեղական տուրքի վճարման նկատմամբ) (6 որոշում՝ 3%),
- գնումներ, մրցույթներ, կարգերի հաստատում (12 որոշում՝ 6%),
- ՀՈԱԿ-ների լուծարում, գործունեության վերսկսում, կանոնադրության հաստատում (8 որոշում՝ 4%),
- և այլ որոշումներ (16 որոշում՝ 8%):

Այլ որոշումների մեջ հաստատված են նաև՝

- Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը,
- Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը,
- Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը:

Պատկեր 10. 2022 թ. Մարտունի համայնքի ավագանու որոշումները

Ավագանու նիստերի տեսաձայնագրությունների վերլուծություն

Մարտունի խոշորացված համայնքի ավագանու 2022թ. նիստերը անցկացվել են համայնքապետի աշխատասենյակում, քանի որ համայնքապետարանը չի ունեցել համապատասխան նիստերի դահլիճ: Նիստերին, բացի ավագանու անդամներից, մասնակցել են նաև համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները և համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը և որոշ այլ աշխատակիցներ՝ հրավիրված համայնքի ղեկավարի կողմից՝ ըստ նիստի օրակարգային հարցերի: Տեսաձայնագրություններից պարզ է դառնում, որ նիստերը կազմակերպվում և անցկացվում են այնպիսի պայմաններում, որոնք անհարմարություններ են պատճառում նիստի մասնակիցներին, չկան բավարար չափով նստատեղեր, տեսախցիկը այնպես է տեղադրված, որ սրահի մի մասը մասնակիցների հետ միասին չի երևում: Աղմուկի պատճառով չի հասկացվում նիստի բովանդակությունը, շատ ժամանակ տեսանելի չէ խոսողի դեմքը: Աշխատասենյակում նիստերի ժամանակ բնակիչների համար առանձնացված նստատեղեր չկան, իսկ բնակիչները նիստերին հրավիրվում են միայն այն ժամանակ, երբ իրենց վերաբերվող հարց կա նիստի օրակարգում:
Օրակարգային հարցերի վերաբերյալ ավագանու անդամներից առաջարկություններ կամ առարկություններ հիմնականում ներկայացնում են «Ալաշկերտ» դաշինքի ներկայացուցիչները (Սյուզաննա Մարկարյան, Հակոբ Բարոյան, Մեխակ Հակոբյան):
Ավագանու կանոնակարգով նախատեսված կարգով, ավագանու նիստերի անցկացման և խմբակցությունների գործունեության իրականացման համար, համապատասխան աշխատասենյակներ համայնքապետարանում 2022 թվականի ընթացքում չեն եղել:
Նիստերի դահլիճը վերանորոգվել և շահագործման է հանձնվել 2023 թվականի սկզբներին:

Եզրակացություններ

- 2022 թվականին Մարտունի համայնքում կայացել է ավագանու 14 նիստ, որից 6-ը արտահերթ, 9-ը՝ հերթական: Մեկ նիստ չի կայացել: Կայացած 14 նիստերի ընթացքում համայնքի ավագանին ընդունել է 228 որոշում: Որոշումների մեծ մասը եղել են՝ համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակազմերի կառուցվածք, աշխատողների քանակ, հաստիքացուցակներ և պաշտոնական դրույքաչափեր (18 որոշում; 9%), բյուջեի քննարկում, հաստատում, փոփոխում, սուբվենցիոն ծրագրեր (34 որոշում; 17%), անշարժ գույքի, հողատարածքների վարձակալություն, աճուրդ-վաճառք, օտարում, անհատույց տրամադրում (74 որոշում; 36%):
- Ավագանու անդամների հետ անցկացված հարցազրույցներից պարզ դարձավ, որ կայացած 14 նիստերին մասնակցել են մոտավորապես 10 քաղաքացի (մասնակցել են անձնական խնդիրների լուծման համար), սակայն արձանագրություններում և պաշտոնական կայքում նշված չեն նրանց տվյալները: Ավագանու անդամներից առաջարկություններ կամ առարկություններ հիմնականում ներկայացնում են ընդդիմադիր խմբակցության («Ալաշկերտ դաշինք») ավագանու ներկայացուցիչները: Ալաշկերտ դաշինքը ներկայացնող ավագանու անդամներ Սյուզաննա Մարկարյանը, Հակոբ Բարոյանը, Մեխակ Հակոբյանը ունեցել են ակտիվ մասնակցություն ավագանու նիստերին: 2022թ. տեղի ունեցած ավագանու նիստերի ընթացքում առավել շատ բացակայություններ ունեցած ավագանու անդամների թիվը ութն է՝ Խաչատրյան Արարատ («Արդար Հայաստան» կուսակցություն, 8 բացակա), Հովհաննիսյան Կարինե («Լուսավոր Հայաստան» կուսակցություն, 8 բացակա), Հունանյան Նորիկ («Ալաշկերտ» կուսակցությունների դաշինք, 7 բացակա), Սահակյան Սեդրակ («Ալաշկերտ» կուսակցությունների դաշինք, 11 բացակա), Վարդանյան Լուսինե («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, 7 բացակա), Ալեքսանյան Հայկ («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, 10 բացակա), Հովհաննիսյան Լիանա («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, 8 բացակա), Մովսիսյան Անդրանիկ («Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, 7 բացակա):
- Բնակչության շրջանում ավելի տարածված է համայնքապետարանին հարցում, բողոք և դիմում ներկայացնելու «դեմ առ դեմ» տարբերակը:
- Համայնքի ավագանու որոշումները և անդամների քվեարկությունները հասանելի են բնակչությանը, դրանք հրապարակվում են համայնքապետարանի պաշտոնական կայքէջում:
- Համայնքի ավագանու նիստերին քաղաքացիների մուտքը բաց է, սակայն բնակիչներն ավագանու նիստերին գրեթե չեն մասնակցում:
- Մարտունու համայնքապետարանը համայնքի ավագանու նիստերի և կայանալիք հանրային լսումների մասին բնակչությանը իրազեկում է մասնակի: Իրազեկումը կատարվում է համայնքապետարանի պաշտոնական կայքէջում հրապարակումների տեսքով, տպագիր տեսքով համայնքապետարանի՝ հայտարարությունների համար նախատեսված ցուցանակին չի փակցվում նիստի օրակարգը, օրը և ժամը:
- Ուսումնասիրելով ավագանու անդամների ընդունած որոշումների թեմատիկ շրջանակը, ակնհայտ է, որ ավագանու նիստերին չեն քննարկվել համայնքի ռազմավարական պլանավորմանն ու զարգացմանն ուղղված հարցեր:

Առաջարկություններ բացահայտված խնդիրների կարգավորման վերաբերյալ

- Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը ակտիվացնելու համար ավելի հաճախ կազմակերպել իրազեկման հանդիպումներ, կայանալիք հանրային լսումների ու ավագանու նիստերի մասին հայտարարությունները փակցնել համայնքապետարանի ցուցատախտակին, ինչպես նաև համայնքի մարդաշատ այլ վայրերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչներն ավելի ակտիվ են սոցցանցերում, առաջարկվում է համապատասխան քայլեր ձեռնարկել և ավելացնել համայնքապետարանի պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան օգտահաշվի հետևորդների թիվը:
- Համայնքային պաշտոնական կայքէջը բնակիչներին հասանելի դարձնելու նպատակով համագործակցել տեղի ՔՀԿ-ների հետ, բնակիչների համար կազմակերպել դասընթացներ և իրազեկման հանդիպումներ:
- Համայնքի ավագանու անդամների ակտիվությունը խթանելու նպատակով՝ առավել ակտիվ ավագանու անդամների գործունեության մասին իրականացնել հրապարակումներ համայնքային կայքէջում և ֆեյսբուքյան էջում:
- Օրենքով սահմանված կարգով ավագանու անդամները կազմակերպեն այցելություններ համայնքի բոլոր բնակավայրեր, զրուցեն բնակիչների հետ և վեր հանեն բնակավայրում առկա խնդիրները. ավագանու նիստերին քննարկել այդ խնդիրներն ու տալ համապատասխան լուծումներ: Այցելությունների ընթացքում բնակիչներին հրավիրել մասնակցելու ավագանու նիստերին և բարձրացնել համայնքում առկա խնդիրները: Այս ամբողջ գործընթացը հրապարակել համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան էջերով:
- Որպեսզի ավագանու անդամները ավելի մեծ պատասխանատվությամբ աշխատեն և ավելի լուրջ վերաբերվեն իրենց գործին՝ ավագանու աշխատանքը պետք է լինի վճարովի:
- Կիրառել խրախուսական մեթոդներ ավագանու նիստերին բնակիչների մասնակցությունը ապահովելու համար:
- Ուսումնասիրելով ավագանու որոշումների բովանդակությունը՝ առաջարկվում է ավագանու օրակարգի մեջ ներառել համայնքի բնակիչների կրթության, մշակույթի ու երիտասարդության զարգացմանն ուղղված հարցեր:
- Ավագանու անդամների (նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների) համար համայնքի միասնական տեսլականի մշակման ռազմավարական զարգացման ծրագրի, գործողությունների պլանի վերաբերյալ քննարկումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների անցկացումը կնպաստի այդ հարցերի շուրջ բովանդակային քննարկումների ծավալմանը ավագանու նիստերի ժամանակ: Դասընթացները կօգնեն նրանց ավելի լավ պատկերացնել իրենց դերը համայնքի կառավարման և զարգացման տեսանկյունից, որը կարժևորի և կխթանի նաև նրանց առավել ակտիվ մասնակցությունը ավագանու նիստերին, ինչպես նաև սեփական առաջարկություններով ու նախաձեռնություններով հանդես գալը:

Սկզբնաղբյուրներ

1. Մարտունի համայնքի ֆեյսբուքյան էջ՝
https://www.facebook.com/martunuhamayngapetaran/
2. Մարտունի համայնքի համայնքային պաշտոնական կայքէջ՝
https://martuni.am/Pages/Home/Default.aspx
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝
https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271

Հավելված 1

ՀԱՐՑԱՇԱՐ

Սույն ուսումնասիրությունն իրականացվում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ «Երիտասարդների քաղաքացիական մասնակցության և սոցիալական պատասխանատվության խթանումը համայնքներում» ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է «Թրանսփերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»-ի կողմից «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Միտք» ՀԿ-ների հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի համայնքային որոշումների կայացման գործընթացներում՝ բարելավելու համայնքների միավորման բարեփոխումների դրական ազդեցությունը:

Հարցումը անցկացվում է անանուն և պատասխանները օգտագործվելու են ընդհանրացված տարբերակով: Խնդրում ենք պատասխանել անկեղծ և եղեք ուշադիր:

1. Ի՞նչ տարբերակով է համայնքապետարանը տեղեկացնում համայնքի բնակչությանը ավագանու մոտակա նիստի օրվա մասին:
2. Նիստից առաջ որքա՞ն ժամանակ առաջ եք տեղեկացվում նիստի և օրակարգի մասին և արդյո՞ք ժամանակահատվածը բավարար է իրազեկելու և օրակարգի հարցերի վերաբերյալ նախնական որոշում կայացնելու նպատակով:
3. Ո՞ր որոշումների նախագծերի մասով է հանրային լսումներ կազմակերպվում:
4. Հանրային լսումների իրազեկման ո՞ր տարբերակն է ավելի արդյունավետ:
5. Կան՞ արդյոք ավագանու նիստերին մասնակցելու համար քաղաքացիներին հատկացված նստատեղեր, և եթե այո, ապա քանի՞սը:
6. Արդյո՞ք բաց է քաղաքացիների մուտքը համայնքի ավագանու հրապարակային նիստերին:
7. Ի՞նչ պայմաններով կարող են քաղաքացիները ներկա գտնվել ավագանու նիստերին:
8. 2022 թվականին կայացած ավագանու նիստերին ընդհանուր քանի՞ քաղաքացի է ներկա եղել:
9. Արդյո՞ք համայնքի ավագանին ունի նստավայր, որտե՞ղ է գտնվում նստավայրը, քանի՞ սենյակից է այն բաղկացած:
10. Ավագանու անդամների կողմից քանի՞ առաջարկություն է ներկայացվել, քանի՞սն են ընդունվել և արդյո՞ք մերժված առաջարկությունների համար ներկայացվել են հիմնավորումներ:
11. 2022 թվականի ընթացքում ավագանու անդամները ընդհանուր քանի՞ հարցում, քանի՞ բողոք և քանի՞ դիմում են ստացել քաղաքացիների կողմից և դրանցից քանի՞սն են առցանց և քանի՞սն են դեմ առ դեմ տարբերակով ստացվել:
12. Ավագանու անդամներից ովքե՞ր և քանի՞ անգամ են համայնքապետից սենյակ խնդրել՝ ընդունելու կամ քաղաքացիների հետ հանդիպումներ կազմակերպելու համար: Խնդրում եմ նշել ավագանու անդամներին և, թե քանի՞ անգամ է նրանցից յուրաքանչյուրը դիմել համայնքապետին այդ հարցով՝ 2022 թվականի ընթացքում:
13. Երբևէ ունեցե՞լ եք արտահերթ նիստեր, և եթե այո, ապա ի՞նչ հարցերով:
14. Սովորաբար ձայների ի՞նչ մեծամասնությամբ են ավագանու որոշումներ ընդունվում:
15. Արդյո՞ք ավագանու անդամները ընդգրկված են ժամանակավոր և մշտական գործող հանձնաժողովների կազմում:
16. Արդյո՞ք իրականացվում են հանրային կարծիքի ուսումնասիրություններ ավագանու որոշման կայացման համար:

17. Ինչպե՞ս է ավագանին/ համայնքապետարանն ապահովում հաշվետվողականությունը քաղաքացիների առջև: Արդյո՞ք ներկայացվում և քննարկվում են հաշվետվություններ: Ի՞նչ խնդիրներ են վերհանվել և ի՞նչ լուծումներ են տրվել:

18. Արդյո՞ք ավագանին/համայնքապետարանը վարում է վիճակագրություն հանրային լսումների ընթացքում ներկայացված դիտարկումների և առաջարկությունների, դրանց հետագա ընթացքի և արդյունքների վերաբերյալ: